ՄՈՆՐԵԱԼԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԱԲԱԹՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԸ



Մոնրեալի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն առընթեր շաբաթօրյա դպրոցի աշակերտությունը

1979 թվականի սեպտեմբերի 15-ին, շաբաթ օրը, Մոնրեալում խանդավառ մթնոլորտում վերաբացվել է ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Հ. Բ. Ը. Միության Ալեքս Մանուկյան շաբաթօրյա վարժարանը, «Արմեն-Քեպեկ» հոյակերտ վարժարանի մեջ, ի ներկայության տեղի հոգևոր հովիվ տ. Պարետ վրդ. Երեցյանի, ծիսական խորհրդի և խնամակալ մարմնի պատվարժան անդամների, տեսչական-ուսուցչական կազմի և ծնողների հոծ բազմության:

Դպրոցի տեսուչն է պրն. Օ. Գալստյան: Ուսուցչական կազմում ընդգրկվել են գաղութի լավագույն մանկավարժները, այդ թվում՝ տիկին Ա. Շաքարյան, օր. Ն. Ծերունյան, տիկին Շ. Գրիգորյան, պրն. Լ. Մինասեթյան, տիկին Ա. Զագրճյան և տիկին Տ. Տրդատյան:

Դպրոցի խնամակալ մարմնում իրենց օգտակար և շինարար օժանդակությունը բերում են տ. Պարետ վրդ. Երեցյանը (նախագահ), պրոֆ. Հ. Խաչիկյանը (ատենապետ), տիկին Է. Ագիպրիթյանը (փոխատենապետուհի), պրն. Վ. Քերեսթեճյանը (գանձապահ), դոկտ. Հ. Էսեկյուլյանը, օր. Հ. Մանկասարյանը, տիկին Վ. Ազնավուրը և պրն. Հ. Անկալաթյանը (խորհրդականներ):

Ուսուցչական կազմի կողքին աշխատում է «կամավոր և սիրահոժար» կերպով նաև «արվեստագետ ուսուցիչներու» խումբը, օր. Նորա Ցագուպյան՝ պարուսույց, պրն. Գրիգոր Մինասեթյան՝ պարուսույց, տիկին Փերուզ Թենթյունյան՝ դաշնակ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Վեհափառ Հայրապետի, շնորհավորում է Մոնրեալի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շաբաթօրյա հայ դպրոցի խնամակալ մարմնի, ուսուցչական կազմի «հարգամեծար և պատվարժան» անդամներին և մաղթում բոլորին քաջառողջություն և բեղմնավոր գործունեություն, 1979—1980 ուսումնական տարվա առիթով:

Սույն տեղեկությունները խմբագրությանն հաղորդել է Մոնրեալից մեր թղթակից Օնիկ Գալստյանը: